Մարգոյ = կոփածոյ, ձուլածոյ։ Վայրի (սեռական) = վայրի (ածական). նոյնն է ըսել խնծորի ծառ (սեռ.) և խնծորի (ուղղական)։

Այս կը ցուցնէ որ ածականի ձևերը աւելի կանուխ կազմուած են լեզուի մէջ՝ քան սեռականները։

Հ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ՄԿՐՏԻՉ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԱՄ

ՆԱՂԱՇ

(Շարուն. տես թիւ ԺԹ. 1905)

5. Փլորենտիոյ ժողովը, Մկրտչի թուղթը, կարէքը, վաղարշապատու 1441ի ժողովը. — 6. Մկրտչի ժամանակները, Մկրտչի ցիշատակարանը և Տաշը։

5. — Մկրտիչ Նաղաշ, երբ եպիսկոպոսական աստիճանով Տիգրանակերտ զարձած՝ զբաղած էր եկեղեցիներու շինութեամբ և նորոգութեամբ, Հռոմայ Եւգենիոս Դ. Քահանայապետը կը կազմակերպէր բնիկ հանրական ժողով մը՝ Արեւելեան և Արեւմտեան եկեղեցիները միացնելու պիտաւորութեամբ։

Արեւելեան եկեղեցւոյն գլխաւոր ներկայացուցիչն էր Յուսնակաները, որուն պատրիարքը Յովսէփ և կայսրը Յովհաննէս Պալէոլոգ՝ յանձն առած էին մասնակցիլ Եւգենիոս քահանայապետին հրաւիրանքը։

Հայկական եկեղեցին ևս նշանակութիւն ունէր. քահանայապետը մասնաւոր ուշադրութեամբ՝ կը հրաւիրէ նաեւ զԿոստանդին Ե. Հայոց կաթողիկոսը։

Այս միութեան և ժողովոյն մասնակցելու խնդրոյն կը միջամտէին նաեւ Կոստանդնուպոլսոյ Յովհաննէս և Նիկայի արքեպիսկոպոսները. թղթակցութիւնը տեղի կ'ունենայ 1433ին, բայց ժողովոյն գումարումը՝ կ'ուշանայ մինչեւ 1439 թուականը։ Կոստանդին կաթողիկոսը 1437ին Այրմսեհ սարկաւագին միջոցաւ՝ Մկրտիչ Նաղաշին կը դրկէ Եսայի արքեպիսկոպոսին թղթերը[1], և որ կը պատասխանէ[2] սա սկզբնաւորութեամբ.

« (Պատասխանի Լաթինացւոց թղթոյն, ի Մկրտիչ Նկարագրէ, զոր գրեաց հրամանաւ կաթողիկոսին Հայոց Կոստանդեայ, և մեծ բարեւնպաստին թուման) ».

« Յաւէժ ծայրացելոյ բնականագոյն նախուսան մեծոց զբաղանից (այսպէս) և վսեմական երիցս երանեալ, և ամենայն ծայրութեանց ծայրագունի համեմատեալ », և այլն։

Այս բաւական երկար թղթոյն մէջ՝ Մկրտիչ իր դատանաքը կ'ընէ համառօտիւ, ինչ որ Հայաստանեայց եկեղեցւոյն է, նաեւ Լատինականին՝ բաց ի երկու խնդիրներէ, Քաղկեդոնի ժողովը և Հոգւոյն սրբոյ բղխման վարդապետութիւնը. վերջինիս վրայէն համառօտիւ կ'անցնի։ Երեք ժողովներու յիշատակութենէ եաքը՝ երբ կարգը Քաղկեդոնի կու գայ՝ հոն կ'երկարի։ Մկրտիչ կը համարի սխալմամբ՝ թէ այդ ժողովը, որուն նախագահն էր Լեւոն քահանայապետին նուիրակը, հաստատեց Նեստորի մոլորութիւնը. կ'ըսէ, « Զեռնարկեցին զՏումարն Լեւոնի և հաստատեցին ըստ Նեստորի դատանել զԲրիստոս սուսկ մարդ ծնեալ ի Մարիամայ, և ասել Քրիստոսի երկու բնութիւն, երկու կամք, և երկու ներգործութիւն »։

Մեր Հայոցս երկու բնութեան սխալ ըմբռնումը եղած է պատճառ՝ Յոյն եկեղեցիէն բաժնուելու. Հինգերորդ դարու մէջ. գործնականին մէջ բոլոր հայ վարդապետներ՝ որոնք հակառակ դրած են Քրիստոսի երկու բնութեան՝ կը դատանին երկու բնութիւն, առանց բնութիւն բառի։ Մկրտչի այս վե-

1. Այս թղթոյս հայերէն հրատարակութիւնը տես Հ. Պալէճեանի Պատմ. կր. վրդ. (տպ. ի Վիեննա 1878) ուր Մենարդոյ հեղինակը մանրամասն կը խօսի Փլորենտիոյ ժողովոյն և Հայոց մասնակցելուն վրայ։

2. Մկրտիչ Նաղաշի պատասխանը կը գտնուի մեր Զեռագրաց մատենագրարանին մէջ։

digitised by A.R.A.R.@

բայիշեալ տոգերը մեծ ապացոյց մ'են թէ միաբանակ կոչուած մեր նախնի վարդապետները երկու բնութիւնը, երկու անձն ի Քրիստոս հաստատած են, ինչ որ Նեստոր վարդապետաց և նզովուած էր։ Իրաւամբ ուրեմն Նաղաշ կը նզովէ այն ժողովը՝ որ Նեստորի մոլորութիւնը կը դատի, որ չէ լոս ինքեան Քաղկեդոնի ժողովը։

Նոյն թղթոյն մէջ կ'ըսէ. « Խոստովանիմք զօծաւն Քրիստոս մի կամք, մի ներգործութիւն, նոր խառնումն սքանչելի և անշփոթ միաւորութիւն, և ոչ երկու բնութիւն կամ շփոթմամբ ըստ Եւտիքէսի »։

Նաղաշի դատաւորութիւնը, ինչպէս կ'ըսէ ինքը, « ի հաւատոյ շինեալ ի վերայ առաքելական վիմին, ընկալաւ Հայաստանեայցս եկեղեցի՝ յեկեղեցւոյն Լատինացւոց, յերից տուրբ ժողովոցն »։ Իրեն գաղափարով, եթէ Լատին և Յոյն եկեղեցիները նզովին Քաղկեդոնի ժողովը, և Լատին եկեղեցին Հոգւոյն սրբոյ բղխումը ի Հօրէ միայն դաւանի՝ այն ատեն պիտի ըլլայ միութիւն եկեղեցեաց, որուն այնքան հաւան է Նաղաշ. « Ո՛վ ոք սմին միաբանութեան սիրոյ և խաղաղութեան լինի պատճառ՝ եղիցի նա որդի լուսոյ և որդի տուրնջեան »։ Իսկ եթէ ոչ՝ « Ո՛չ ընդունի Հայաստանեայցս եկեղեցի, և ոչ կարօտանայ այպիսի սիւնհոդոսի, զի անխտեղի է մնացեալ ի վերայ հիման հաստատութեան »։

Կը վերջացնէ թուղթը նոյնպիսի կրկնութեամբք. « Եթէ զքաղկեդոնին բանայք ի միջոյ, և զերից տուրբ ժողովոցն ընդունիք, զոր ի վերայ գրեցաք, լինի միաբանութիւն եկեղեցւոյս Հայաստանեայց, ընդ եկեղեցւոյն Լատինացւոց և Յունաց և այլ ամենայն քրիստոսադաւան ազանց, և մոխրամած գիմաք՝ հլու և հնազանդ լինիմք հրամանաց ձերոց գերագրական իշխանութեանդ։ Ապա եթէ զեկամուտն հաստատել կամիք, և զանշարժն ընդ թիւրեալսն յարմարել. այլ անհնարին է լինել, զի մերս եկեղեցի ոչ միաբանի այդմ գործութեան »։

Մկրտչի այս խօսքերէն յայտնի կը տեսնուի որ ինքը հակառակ չէր միաբանութեան, որուն հակառակը կը գրէ Կ. կոստանդնոց յէջ ժե։

Թղթիր մը՝ թէ ճրը գրեց Մկրտիչ այդ թուղթը։ Հ. Զամչեան՝ « ի թուին ՊՁԵ (1436) ի 16 մայիսի » կը դնէ, որուն կը հետեւի նաեւ Կոստանդնոց (յէջ ժե)։ Բայց ես կարծեմ այդ թղթոյն գրութիւնը երկու տարի վերջ եղած է. այն է՝ 1438ին ի 16 մայիսի, ինչպէս որ նոյն ինքն Մկրտիչ Նաղաշ՝ այդ թղթոյն կցած ցիշատակարանին մէջ կը գրէ հետեւեալը. « Վերջինս ի մանկունս Սիոնի, անյիշելի հոգիս, անարժան Մկրտիչ կարծեցեալ իմաստակ, բացաստութեամբ եպիսկոպոս Համիթ քաղաքի, մականուն Նաղաշ՝ մակագրեալ, հրամանաւ Տեառն իմոյ Կոստանդին պատրիարքի և քաջ ախոյենին, և անյաղթ փիլիսոփային Թումայ բարձունապետի՝ արեւելեան հանսորի, սուղ ինչ տրամագտեալ պատասխանի եկեղեցւոյն Լատինացւոց, զոր վերագրեալ եղեւ... ի ծննդենէն Քրիստոսի մինչ առ մեզ ՌՆԼԸ (1438) ամի ... ի թուականութենէդ յարաբերգեալ արմենագրի համարտղական արհեսաի ՊՁԷ (= 1438) ամին, յամսեանն Մայիսի վիշտասան աւուր, ի չորեքշաբաթի։

Եւ նուիրեցաք ի ձեռն Արղամեհի սարկաւագի. որ է նուիրակ տեառն Եսայեայ արքեպիսկոպոսի, որ եղեւ առ մեզ արքեպիսկոպոսի, որ եղեւ առ մեզ արքեպիսկոպոսի ամիս ժ (տասն) վասն պղտորութեան ժամանակիս, որ շատ աշխատանք կրեաց, որոյ տացէ տէր Աստուած մասն բարի »։

Զեմ կարծեր որ Մկրտչի այս թուղթը ժողովոյն ներկայացուած ըլլայ։ Կոստանդին կաթողիկոսը տարբեր գաղափար ունէր քան ինչ որ Նաղաշ. ան առանց գժտաւորութեան կը միաբանի և իր պատուիրակները կը զրկէ յԱրեւմուտս՝ փոխանակ ինք երթալու. կաթողիկոսին անձամբ այդ ժողովոյն ներկայ չըլլալուն պատճառն՝ ժամանակին պատեղամոց կը վերագրուի[1]։

Այս զէպքէն երեք տարի վերջ, երբ արդէն վախճանած էր Կոստանդին կաթողիկոս (+ 1439), 1441ին Սսոյ աթոռոյն վրայ

---

1. Տես այս մասին Հ. Պարեանի վերոյիշեալ Պատմ. կաթ. վարդ. գիրքը։

digitised by A.R.A.R.@

կր պաշտօնավարէր Գրիգոր Թ. Մուսարեկեանց։ Սա հավիւ թէ կաթողիկոսութեան առաջին տարին լրացուց՝ Արեւելեան հայ վարդապետք՝ ստիպեցին զինքը վաղարշապատ փոխադրուիլ։ Երբ ընդդիմացաւ Գրիգոր, բազմաթիւ եպիսկոպոսներ, վանահայրեր և վարդապետներ՝ Էջմիածնայ մէջ ժողով մը գումարեցին և Գրիգորը ապօրինաւոր կաթողիկոս հռչակելով՝ գնիրակոս Վիրապեցին զրին իրրեւ օրինաւոր յաջորդ Լուսաւորչի։

Այդ ժողովոյն պատմութիւնը մանրամասն գրուած է Թովմա Մեծոփեցիէն[1], այր գործիչներէն ամենէն նշանաւորն էր և Մկրտիչ Նազարի ամենէն յարգած գիտնական վարդապետը։ Զարմանալի է՝ որ այդ ժողովականաց մէջ չի յիշուիր Ամրայ եպիսկոպոսը Մկրտիչ։ Նազարի ներկայ չգտնուիլը՝ մեծ նշանակութիւն ունի բան խս։ Մեծ. Կ. Կոստանեանց (յէջ 69) կը գրէ. « Այդ երեւոյթին երկու տեսակ կարելի է բացատրել. կամ Մկրտիչ Նազար հակառակ էր վաղարշապատու ժողովին և օրինաւոր էր համարում Սսի աթոռի գոյութիւնը. և կամ քաղաքական պատճառներով անկարող էր մասնակցել »։ Կոստանեանց վերջինը աւելի հաւանական կր համարի. (ի հարկէ, քանի որ իրեն ծանօթ չէր Աստուածատուրի Ցիշատակարանը). իսկ ես առաջինը հաւանական կը համարիմ։ Կոստանեանցի վերջնոյն հաւանական համարելուն պատճառս է. Միջագետի « Համզայ ամիրան՝ վաղարշապատու ժողովին նպաստող Ազուպ պէկի հակառակորդն էր »։

Կ. Կոստանեանցի փաստը այն ատեն միայն ոյժ պիտի ունենար՝ եթէ Ազուպ պէկը հրամայէր ժողով գումարել ի Վաղարշապատ՝ Սսոյ կաթողիկոսական աթոռը փոխադրելու համար, և Համզայ ամիրան ալ իրեն շահեցուն համար՝ ուզէր որ Հայոց կաթողիկոսը Սիս նստի։ Վերոյիշեալ երկու կարծեաց առաջինը հաւանական համարելուս պատճառը հիմնած եմ Աստուածատուրի, Մկրտչի ժամանակակից Ցիշատակագրին վրայ։ Վաղարշապատու ժողովոյն մէջ՝ Սսոյ եպիսկոպոսներէն ոչ մին ներկայ չէր, վասն զի անոնք աթոռոյն փոխադրութեան անհաւան էին. և Մկրտիչ Նազար վերոյիշեալ թուղթը գրէէն վերջ՝ համակրանք մ'ունի դէպ ի Հռոմ. իրեն սիրելի բարեկամն է Կաֆայի Յարգիս եպիսկոպոսը՝ որ Կոստանդին կաթողիկոսին իբր նուիրակ գնաց ի ժողովն Փլորենտիոյ, և սա ստորագրութեամբ հաւանեցաւ Հռոմայ պահանջներուն.

« Որդ՝ ես Յարգիս վարդապետս՝ որ եմ դեսպան Հայոց կաթողիկոսին, և աթոռակալ Կաֆային. այս սահմանս գրեցաւ ձեռամբ իմով[2] »։

Ինչպէս կր պատմէ Աստուածատուր ժամանակակից յիշատակագիրը՝ 1443էն վերջ, երբ այլազգիք Ս. Թէոդորոս եկեղեցւոյ զամբէթը կը կործանեն, և Նազար սրան ցաւէն կը հեռանայ Տիգրանակերտէն ու Կաֆա կ'երթայ, վերոյիշեալ Յարգիս վարպետը՝ սիրով կ'ընդունի զՄկրտիչ. և Նազար երբ 1447ին Տիգրանակերտ կը դառնայ՝ Ս. Թէոդորոսի գմբէթը նորոգելու համար, իր հետ կը բերէ (մայր եկեղեցւոյ մէջ գնելու համար) « զհրաշալի չքնաղագարդ զպատուական սուրբ Նշանն Քրիստոսի, բերեալ ի Կաֆայէն, որ ունի մասն ի խաչափայտէն Քրիստոսի ... եւ թէ ուստի՞ իցէ հրաշալիս այս սուրբ Նշանս պատուական. զսա պապն Հռոմայ պարգեւեաց մեծ վարպետին Յարգսի Կաֆայեցւոյն, յորմէ գնաց ի Հռոմ. և ի գնալն Տէր Մկրտչին ի Կաֆայն՝ մեծ վարպետն Յարգիս ընկալաւ մեծ պատուով, և ընդ բազում մեծարանացն և պատուոյն պարգեւեաց Տէր Մկրտչին զսուրբ և զհրաշալի զպատուական սուրբ Նշանն »։ Մկրտիչ՝ զայս Ս. Թէոդորոս եկեղեցւոյն մէջ կը գտնէ մեծ հանդիսիւ, և « կարգեաց յանուն (այս) սուրբ Նշանին, և սահմանեաց յամենայն ամի, յամենայն տարի զնոյն տօնս

1. Այս գրութիւնը ուսումնասիրուած Կ. Կոստանեանցէ՝ հրատարակուած է ի Թիֆլիզ 1892։

2. Չմմա. Հ. Պալէեանի Պատմ. կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, յէջ 141։

digitised by A.R.A.R.@

մեծ ուշադրութեամբ խրախուսիչն առնել[1]». և պէտք է ուշ դնել որ այն Յայտմաւուրը, որուն մէջ կը գրէ Աստուածատուր այս տողերը՝ Մկրտիչ ինքն իր ձեռքով նոյն Ս. Թէոդորոս եկեղեցւոյն կ'ընծայէ։

Մկրտչի ունեցած այս սեռա յարաբերութենէն (Արգիս վարպապետի հետ) և Հռոմայ պապէն տրուած ս. նշանը ընդունելէն՝ կը հետեւցուի որ Նաղաշ, որ այնքան կը փափագէր միութեան՝ համակարծիք եղած է Փլորենտիոյ ժողովոյն. և այդ պատճառու վաղարշապատ ժողովոյն ներկայ չէ եղած. վասն զի պիտի կորուէին այն ամէն յարաբերութիւնք՝ ինչ որ ունէին Սսոյ կաթողիկոսք՝ Հռոմայ հետ։

*

6. — Մեր մատենադարանի ժ. Աստուածաշունչը, որ խլաթի մէջ նկարուած է Մկրտիչ Նաղաշէն 1418ին (այն թուականին երբ Պոռի, իր հայրենիքին մէջ Յայտմաւուրք մը կը նկարէ[2]) Յովհաննէս վարդ. որդի Սահմանին որ ուրէն էր այս ձեռագրին՝ «վասն առաւել բարեսէր կամացն ապար գանարժան ծառայս (զՄկրտիչ Նաղաշ) իւրն յորդեգիր, և յառաջ քան զվախճան իւր երեք ամամ՝ պարգեւեաց մեզ (յիշատակագիր Մկ. Նաղաշն է) զսուրբ գիրքս. յետ վախճանի սուրբ վարպապետին զ (վեց) տարի ի մայրաքաղաքն յԱմիթ ի նորակերտ սուրբ կաթուղիկէն»։ 1449ին Մկրտիչ Նաղաշի հայրենակից Առաքելին (բանաստեղծ) ուշակերտը Յովսէփ՝ Տիգրանակերտ գաղով Գ.ՃՌ (300) թանկայ վճարելով կը գնէ զայս։ Այդ ձեռագրին մէջ է՝ որ կը գրէ Նաղաշ մանրամասն և չի սեղեկութեամբ Յիշատակագրութիւնները, և մանաւանդ Մերսինի ժամատանտին սրսուաշարժ նկարագրութիւնը կ'ունէ, ուր կը յայտնուի իր զգայուն սրտի սէրը և բանաստեղծ ըլլալը։

Մերսինը Նաղաշի թեմին մէջ էր. իբրեւ հովիւ մը այդ տառապեալ քաղաքին՝ կ'երթայ նա թշուառներուն միխիթարանքն ըլլալու.

«Որ և եղեւ մեզ, կը գրէ, գնալ և անդիպել ի Մերսին քաղաք ի սոյն ամի և դառն ժամանակի, զոր ոչ կարեմ պատմել կամ ընդ գրով արկանել զանցս աղեւսից և զմրուր դառնութեան...

Յամենայն ասաւոտու փոխանակ լուսոյն՝ ազիզորդին կսկծեն ծագէ. և յամենայն առուր փոխանակ արեւուն արեան արտասուք։ ... Անդ էր տեսանել զոգբս արտասուաց, և անդանօր զկսկիծն մաղկատանաց։ Զայիս ծերոյ արեան արտասուօք թաթաւեալ և զմարքն որդեմուռ կիսամահ նաւաղեալ. ոմանք ծամկուուր, և այլք ոմանք հերարձակ, ոմանք սեւազգեստ և կէսք հրապարակ ... Ո՛հ դառն դառաստանիս և սաստիկ վրէժիսնդրութեանս. ա՛հ անկասկած կատարածի և արժանապատուհասք. վա՛յ է ինձ ի բիւրս հաղարաց և եղուկ է զիս. թէ զո՞ր կսկիծ տեսի կամ զո՞ր դառնութեան բաժակ ըմբեալ հաշակեցի։ Զի տեսի զնորաբողբոջ մանկունքն՝ յաստուածապին յահեղ սրոյն սասանեալ, զի թաւալէին մանկունքն առաջի ծնողացն որպէս զդառն սրով զնեալ. կամ զդազա ազանդ նեսու. խոցոտեալ, ի վերայ գրկաց մարցն նուաղեալ, և ողորմ ընդ երեսս ծնողին նայեցեալ, զձեռքն մեկնեալ և զուրքն տարածեալ, և առ մայրն ազաղակեալ և ի օգնութիւնն խնդրեալ։ Ո՛ մայրն ազոսքիր մանկան, և ոչ հայրն օգնական լէներ. և հրեշտակն ահեղ կերպարանօք զնոգին քակտեր. և ընդ քակտիլ հոգւոյն անեղաց՝ և ծնողաց հոգին խոցոտեր։ Այդ էր տեսանել և զմանկունս մուրուագալի ազիզորդին թաւալեալ. զնոր փեսայն և զնորահարսն, զի փոխանակ վայելուչ անկողնոյն՝ ի գէլ գեսոին և ի ներքոյ հողին տարածեալ. և փոխանակ հարսանեացն սուգ սաստանացեալ։ ... Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն լաղում մեղաց մերոց ի ՊՂԸ (= 1449) թվ. Հայոց, յորում ամի այսպիսի սաստիկ պատուհաս ընդ ամենայն գաւառս տարածեցաւ և զբազումս լալագին արար»...

---

1. Աստուածատուր Յիշատակագիր. տե՛ս և Հրաբատ ամսագրի Էջմիածնի յամի 1898 ի Յաւելուած Յունուարի։ Այս յիշատակարանին մեր նօսրագիր օրինակը, ուսկից օրինակած տպած է Հ. Ալիշան Հայապատումի մէջ (Յոգ. 376), և վերջոյ 10-15 տող կը պակսի։ Հ. Ալիշան կ'ափսոսայ Յիշատակարանիս վերջն կորած ըլլալուն համար. չի տիշէր թէ 1898ին ամբողջութեամբ արդէն հրատարակուած է «Արարատ» ամսագրին մէջ։

2. Մկրտչի այս գրած յիշատակարանովս կը հաստատուի թէ՝ այն գրիչը Մկրտիչ՝ որ Պոռի մէջ Յայտմաւուրք մը կը նկարէ 1418ին և ինքզինքը սարկաւագ կը կոչէ է մեզ Նաղաշը։ վասն զի այդ 1418ի յիշատակարանին մէջ կը գրէ «որ կոչիմ սարկաւագ, բայց քացատուրեամբ եւ ոչ ստորատուրեամբ։ Նոյն քացատրութիւնը կայ և մեր մատենադարանի ժ. Աստուածաշունչին մէջ, որուն գրիչը՝ ստուգիւ Մկրտիչ Նաղաշն է. կը գրէ «Մեծաւոր Մկրտիչ՝ քացատուրեամբ եպիսկոպոս և ստորատուրեամբ Ծղլ», և այլն։

digitised by A.R.A.R.@

Միջագետքը մինչեւ ժանտախտէն կը կոտորուէր՝ անկին Քաղբերունեաց գաւառն ալ (ըստ Մկ. Նաղաշի նոյն յիշատակարանին) Աքանդարի Իրանց որդիէն. որ և Արմէշը կ'ասերէ. «և զաւազերեցն Աբեղիշու, այր շնորհալի, գրագիր և փիլիսոփայ՝ ի վասման Թոնիրն խորտիցին. և զզոտիկ ըռայիսն՝ ամենայն ընտանեօք զերի բերին յԱմիթ». դեռ բազմաթիւ գերիներ, հարսեր և աղջկունք անօրէններու ձեռքը մնալուած՝ ըռայիսին հետ Տիգրանակերտ կը բերուին։ Նաղաշ մահը աչքը առած՝ ամէն հնարք կ'ընէ զանոնք ազատելու համար և 14,000 թանկագին վճարելով Իլանդին՝ իր նպատակին կը հասնի. «Ազատեցան Աստուծով ըռայիսն և հարսունքն և աղջկունքն՝ անարատ մնալով յանօրինացն, կարգուելեամբն Աստուծոյ ցիսուսի Քրիստոսի»։

Մկրտիչ այդ յիշատակարանին մէջ կը թուարկէ իր իշխանութեան տակ եղած քաղաքները. «Մկրտիչ սոսկ անուամբ եպիսկոպոս Ամիթ քաղաքի և Մերանայ, Ռոհայու և Թիլկուրտայ, Հինու և Աղոնու»։

Մերանը սակայն չի մաքրուիր 1449ի ժանտախտովը. ճիշդ 20 տարիներ ետքը՝ 1469ին՝ առաջնոյն նման կու գայ նորէն աւերելու այդ քաղաքը. և այս անգամ Մկրտիչ, ծերունի հալիւբ՝ կ'երգէ «Արարիչն արարածոց մեզ բարկացաւ[1]» քերթուածը. յիշելով նաեւ այն տողերը՝ զորս գրած էր քսան տարի առաջ վերոյիշեալ ժ. Աստուածաշունչին մէջ։ Հետեւեալն է այդ տողին յիշատակարանը.

«Եւ Մկրտիչ եպիսկոպոս Ծառայ Կուսին՝
Աչքս տեսայ դառն կըսկիծ տղրմագին.
Լալով լացի և զդացի արասասուագին,
Դառն արասասուաքս զդոյս ասացի Նոր մեռելին։
Ի Հայոց մեծ Թվականի յինն հարիւրին.
Ի համաատ այլ աւելի տասնեւութին,
Աչքս տեսայ գոլը և զհառաչքն դառնագին,
Զմերոյին քաղաքն արար ցամէնքն լալագին»։

Տողերէս յայտնի կը տեսնուի որ այս տաղը գրած է Մկրտիչ 1469ի տեղի ունեցած ժանտախտին առթիւ։ Նոստրք Հայոցի մէջ բերուած (յէջ 209) այն տարեկիրը՝ որ Զմիթ թուին (= 1463) կը դնէ Նաղաշի այս երգին յօրինումը՝ ապահովապէս սխալ է։

Պատմութիւնը և Ցիշատակագիրքը այլ եւս կը լեն։ Այդէն 1469ին Մկրտիչ առ նուազն ութսուն տարուան մօտ պէտք էր ըլլայ, քանի որ 1418ին գինքը իբրեւ տարկատագ ճանչցանք, և անշուշտ մի քանի տարի վերջ կնքեց մահկանացուն, անծանօթ քարի մը տակ թաղուելով։

Շարայարելի Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՄՇԿԻԿ

(969-976)

ԺԲ. — Ռուսական պատերազմ. — Զմշկիկի յաղթանակները Ռուսաց վրայ. — Վարդ Սուլերոս. — Պարանոյ բանակը. — Ռուս Գողհաթը. — Մեծամարտներ։

Նիկեփոր, Բուլղարաց արշաւանքներէն ազատելու համար՝ քաղաքագիտական մեծ սխալ մը գործած էր։ Ռուսերը յորդորած էր Բուլղարիա արշաւել (969ին), և անոր կողոպուտովը հարստանալ։ Այսու կը յուսար երկու վտանգներ իրարու բաղխել, սպառացնել, փշրել. բայց Ռուսեր այնքան շուտով տիրեցին Բուլղարիոյ, որ Նիկեփորի ծրագիրը բոլորովին հակառակ կերպով իրագործուեցաւ. փոքր սպառնալիքին՝ մեծը յայտնուեց, Բուլղարներու տեղ՝ իրեն գրացի ունեցաւ Ռուսերը, որ աւելի քաջ, ընչաքաղց և յանդուգն էին։

Քալքիյրոս անուամբ յոյն իշխանը, որուն յանձնուած էր Սլաւներուն դէմ ի Բուլղարիա արշաւանքի մը հրահրագիրը տանիլ, զեղծաւ իր պաշտօնով։ Ցեռ զանոնք Բուլղարիա հասցնելու, յորդորեց Պոլիս դալ, տիրել, յունական գանձերով հարստանալ, պայմանաւ որ զինքը Բիւզանդիոնի կայսր ընեն։

Ո՛ր և իցէ թշնամւոյ յաղթելու համար՝

1. Այս տաղը առաջին անգամ ամենահին Ցաղարքանին (1513ի տեղ) մէջ տպուած է։

digitised by A.R.A.R.@